են ցեղապետներն, որք գեղեցիկ են և հայկական դէմք ունին։

10· ՄԱՄԸԹԻ·—

11· ՄԸԼՈՅԻ·—

12· ՄԸՍՈՒՐԵԱՆ·—

Սիսկիրցոց չորս գլխաւոր նախահայր կը հաշուի Սիսրքան, Մանրքի, Իսատրզան և Քլերի։

Մանրքցոց չորս գլխաւոր նախահայր կը հաշուի, Մանրքի, Մուշիլքան, Բրուքինէ և ին։

Բրուքցիք հայէ և եղտիներէ դարձած են։

ՀԱՅՏԱՐՑԻՔ

Այս ցեղը այժմ 10,000 տուն կը հաշուի և ամենէն բազմաթիւ ցեղն է, որք Շարոյի տնէն յառաջացած են, իւրեանց նախկին բնակավայրն Մէհմրտան եղած է, ըստ իւրեանց ասուԹեան Ապաղայու և Աղբակու միջավայրը՝ յարևելս տարածուած էին։

Այժմ տարածուած են ամբողջ ծաղկանց (Ալադաղ) լեռներուն ձորերու ու հովիտներու մէջ—Ապաղա, Խամուր, Բաղնոց, Արձէշ։ Միայն Խամուր (ծաղկոտն) 22 գիւղ Հայտարցի կան։

Հայտարցոց Թուոյն մէջ են իրենց ցեղին վերաբերող Բաշրմինէ, Էթմանաքի, Ադամինէ (Ադամեան), Սագանի (Սագոյեան), Մուքինէ (Մուքայէլեան) [1]։

Ամենէն մեծ ցեղը Գորոյի ցեղն է Հայդարցոց մէջ։

1· Հայդարցոց կը պատկանին Մուքոյեանք, որք 30 տան չափ են եւ Բաղնոցայ վիճակը կը բնակին, սոքա կը խոստովանին Թէ հայէ դարձած են եւ դեռ մօտ ժամանակներն, մի տնէ ելած 30—35 տուն· սոքա գնայս կը պաշտպանեն։